[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
4	Փետրվար	2019 թ.		Ա	6523275259
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
4	Փետրվար	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	5	2	7	6	2	4		
[9] Անվանումը	«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	2	5	2	7	6	2	4	/	1
[11] Բանկային տվյալները	Արարարատ բանկ		N 1510002308480100							
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 17									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն		N 900011000834							
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ	Կամո Վարդանյան									
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (քանակաչափը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	դատահոգեբանական փորձաքննություն (գործ 16855818)	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ HARUTYUNYAN SUSANNA
7314730458
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը, ստորագրությունը, (անունը, ազգանունը)

պաշտոնը, ստորագրությունը, (անունը, ազգանունը)

04/02/2019 11:39:55

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հետմահու դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

ք. Երևան 15.10.2018թ.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Վ.Հովակիմյանս, վերանայելով թիվ 16855818 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի օգոստոսի 18-ին ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնից ոստիկանության Մալաթիայի բաժին նյութեր են ստացվել այն մասին, որ օգոստոսի 15-ին՝ ժամը 21:30-ին, «Աստղիկ» բժշկական կենտրոնից հաղորդում է ստացվել այն մասին, որ «Էկզոգեն թունավորում» ախտորոշմամբ իրենց մոտ բուժօգնության է ընդունվել Լիանա Վրեժի Խուդավերդյանը:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Լիանա Խուդավերդյանը 2018 թվականի օգոստոսի 15-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, իր կյանքին վերջ տալու նպատակով խմել է 95 հատ «Կոլխիցին» տեսակի դեղահաբ, որի հետևանքով օգոստոսի 17-ին՝ ժամը 18:00-ին «Արմենիա» բժշկական կենտրոնում մահացել է:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում՝ 2018 թվականի օգոստոսի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 16855818 քրեական գործը, որն ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին::

Քրեական գործով Լիանա Խուդավերդյանը ճանաչվել է տուժող:

Նյութերի նախապատրաստման ընթացքում բացատրություն է տվել Ռուզաննա Հարությունյանը այն մասին, որ 2018թ. փետրվար ամսից ավարտական քննությունները հանձնելու կապակցությամբ Լիանա Խուդավերդյանի մոտ, ով հանդիսանում էր նրա աղջիկը և ով սովորելիս է եղել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, նկատվել է գերլարված, նյարդային, հուզական վիճակ՝ կապված քննությունները բարեհաջող չհանձնելու մտավախության հետ, որը դրսևորվել է նրա կողմից ձեռքերն անկանոն շարժելով, նստած ժամանակ ոտքերն անընդհատ շարժելով, տան մեջ քայլելով, շարունակ ասելով, որ իր մեջ դատարկություն է զգում, չի կարողանում սովորել բժշկական համալսարանում, աշխատել բժշկության ոլորտում, պարփակվել է իր ներսում, ինչի համար նրան տարել է հոգեբանի, հոգեբույժի, նյարդաբանի մոտ և վերջիններիս կողմից նշանակվել են համապատասխան դեղամիջոցներ, սակայն բոլոր դեպքերում որոշակի ժամանակ ընդունելով դեղամիջոցները Լիանա Խուդավերդյանը հրաժարվել է շարունակել բուժումը՝ պատճառաբանելով, որ դա նրան հարկավոր չէ, անիմաստ է: Ռուզաննա Հարությունյանը բացատրություն է տվել այն մասին, որ Լիանա Խուդավերդյանը իր համալսարանական պրակտիկայի ընթացքում բազմիցս ականատես է եղել

դիահերձումների, որոնցից նա տպավորվել է: Բացի այդ իր համալսարանական պրակտիկայի ընթացքում առնչվել է երիտասարդ աղջկա կողմից ինքնասպանության փորձի դեպքի, ով նույնպես «Կոլխիցին» դեղամիջոցն էր խմել, սակայն քանի որ չափաքանակը քիչ էր եղել՝ 40 հատ, կյանքը հաջողվել էր փրկել: Այդ դեպքից հետո նա շարունակ խոսել է այդ մասին և իրեն համեմատել ինքնասպանության փորձ կատարած երիտասարդ աղջկա հետ՝ գտնելով, որ երկուսն էլ հոգում զգում են դատարկություն:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է պարզել Լիանա Խուդավերդյանի ընդհանուր հոգեկան վիճակը, թե ինչպիսի հոգեբանական վիճակում է նա գտնվել մինչ ինքնասպանություն կատարելը և այն կատարելու պահին, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մի շարք այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատահոգեբանական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-րդ, 244-րդ և 248-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 16855818 քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ***«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կիրառական հոգեբանության և հոգեբանության ամբիոններին:***

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Ինչպիսի անհատական հոգեբանական, անձնային, հուզական առանձնահատկություններ է ունեցել Լիանա Խուդավերդյանը,

բ/ Ինչ հոգեկան վիճակում է գտնվել Լիանա Խուդավերդյանը ինքնասպանությանը նախորդող ժամանակահատվածում, որն էականորեն ազդել է նրա գիտակցության և վարքի վրա,

գ/ Առաջացել է արդյոք Լիանա Խուդավերդյանի մոտ ինքնասպանությանը նախորդող ժամանակահատվածում հուզական վիճակ՝ կապված նրա շրջապատող անձանցից որևէ մեկի պահվածքի հետ,

3. Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր ևս, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, այդպիսիք կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար, ապա խնդրում եմ պատասխանել նաև այդ հարցերին:

4. Հանձնարարել ***«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան»-ի ռեկտորին*** պարզաբանել փորձագետին ում հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85 հոդվածով նախատեսված՝ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված՝ փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Փորձագետներին տրամադրել սույն որոշման օրինակը:

Ծանոթություն: Փորձաքննության կատարման համար թիվ 16855818 քրեական գործի նյութերը պահանջվելու դեպքում՝ կտրամադրվեն փորձագետներին:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի
քննչական բաժնի քննիչ՝ Ա.Վ.Հովակիմյան